են նրանք՝ իբրև որոշ տուրք։ Որպէս զի դրանց մասին մի գաղափար տամ Ֆեզ՝ այստեղ առաջ եմ բերում մի նմոյշ գիւղի քէդխուդա՝ պ. Զաքարիայի տուած տեղեկութիւնից.

1917—8 տարւայ ընթացքում գիւղացիները վճարել են առքաբներին։

216 հատ հաւ.	3000 հաւկիթ.
200 էշ.	840 բեռ յարդ.

100 հոգի էլ գործող մարդիկ են տուել։

Ա.հա Ֆեզ հարկեր, ապօրինի, անկանոն հարկեր, որոնց շնորհիւ գիւղացիութիւնը դիմում է դէպի քայքայում, դէպի ծայրայեղ թշուառութիւն։ Այս տխուր հանգամանքի վրայ աւելացնենք և այն երևոյթը, որ այստեղ հայերը շրջապատուած լինելով վայրենի լեռներով՝ վարում են ճնշուած կեանք։

Այստեղ հողը մեծ մասամբ ջրովի է. հերկում են արօրով և ցանում նոյն հացահատիկներն և հացաբոյսերը։ Օգտուում են Զայենդէրուդից, որն օձապտոյտ անցնում է գիւղի արևմտեան կողմից։

Գիւղն ունի մի եկեղեցի Ս. Մինաս անունով և մի ջրաղաց։ Դպրոց չունի։ Ժողովուրդը կրթութեան կարիք ունի։

№	ԿԱՐԳԵՐ	Շունչ
1	Աղքատ	100
2	Զուններոր	20
3	Միջակ	100
4	Ունեւոր	52
5	Հարուստ	—
	Ընդամենը	272

ԱՐԹՈՒՆԱԲԱԴ

Բարդաշայից դէպի արևմուտք, քառորդ ֆարսախ հեռաւորութեան վրայ կանգնած է զուտ հայաբնակ Արթունաբաղ գիւղը. սա սարի լանջին ընկած մի փոքրիկ գիւղ է, որն իր առաջ ձգուած ուռենիների և բարդիների ծառաս-